

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաքանութիւն ըստ 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՎԱԾ 1899 ԹԻՎԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԻՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԼՐԱԿՐԻ

«ՄՇԱԿԻ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎԻԼ ԴՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՐՈՎ ԵՒ ԴՈՅՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԵՐ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի: ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱԲԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ԽՐԱՐԱՐԱՄԱՐՈՎ (Բաղադրայա և Բարոնական փողոցների անկիւնը): Կարողութեամբ ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է գրամը հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Ցայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա. Պ. Ա. Ռ. Կ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Զ. Է. Ը. Ն. Գ. Ո. Ն. Վ. Ո. Մ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օտար դրամադուրները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Թաւրիզից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտպանութիւնները Բաղադրայա. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ.—Թատրոնի շուրջը:

ՑԱՐ ԴԱՄԱՐԱՎԻԼՆԵՐԸ

Այն օրից, երբ անգլիացիները մուտք գործեցին Բագուի նաւթային աշխարհը, ուստի մամուլի մէջ մի ահագին զբաղանդութիւն ստեղծվեց այն հարցի վերաբերմամբ, թէ որքան ֆինանսական կամ օգտակար է օտար դրամադուրներին մասնակցութիւնը Ռուսաստանի արդիւնաբերական ձեռնարկութիւններին մէջ: Այդ կարևոր հարցը շօշափվեց և «Մշակի» մէջ:

Արտայայտված կարծիքները կարելի է բաժանել երեք կարգի. մի մասը բոլորովին ֆինանսական է համարում օտար, գլխաւորապէս անգլիական դրամադուրի տիրապետութիւնը Ռուսաստանում, և գտնում է, որ հայրենի արդիւնաբերութիւնը կարող է

մեծ հարուստ ստանալ, որովհետեւ անգլիացիները աւելի փորձված, աւելի ճարպիկ և աւելի հարուստ են, ուստի և մրցութիւնը նրանց հետ անհնարին կը լինի և արդիւնաբերական ձեռնարկութիւններէն առաջացած ահագին օգուտները չեն մնայ երկրի մէջ, այլ կանցնեն Անգլիա: Մի այլ մասը, ընդհակառակը, կարծում է, որ անգլիացիները, լինելով աւելի փորձված, աւելի հմուտ, ունենալով առատ դրամական միջոցներ, մեծ զարկ կը տան երկրի արդիւնաբերութեան, և ծաղկեցնեն, կը զարգացնեն արդիւնաբերական նոր ձևեր, կը զարթոնեն թմրած ոյժերը և մեծ շարժում ու կենդանութիւն առաջ կը բերեն երկրի արդիւնաբերական կեանքի մէջ: Կայ և երրորդ կարծիք, որ յայտնում է, թէ օտար դրամադուրի մուտքը օգտակար է մեր երկրին միայն որոշ դէպքերում. եթէ այդ դրամադուրը գալիս է բոլորովին մի նոր ձեռնարկութիւն ստեղծելու, հողի ծոցում թաղված մի անյայտ բնական հարստութիւն շահագործելու, ինչ կասկած, որ նա օգտակար է: Բայց եթէ այդ դրամադուրը նպատակ

ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐԶԸ

Ներքին ժամանակ է, որ ընդհանուր հասարակութեանը թատրոնական տեղեկութիւններ տալը: Պատճառը, ճշմարիտ, դժուարանում են բացատրել: Գեղարուեստի անկումը, հայոց թատրոնի չունենալը և հասարակութեան անտարբերութիւնը իրար հետ միացած՝ միանգամայն ստեղծում են մարդու եռանդը և կործանում հաւատը դէպի լաւը, դէպի գեղեցիկը, դէպի իդէալականը... Շատ անգամ, մասնաւորապէս, ինքն ինքն հարց են տալիս, բայց որոշ եզրակացութեան չեն կարողանում գալ, որոշ պատասխան չեն կարողանում ստանալ:

Ապրում են ոչ յետ ընկած գաւառական քաղաքում, այլ Թիֆլիսում, մտաւոր զարգացման կենտրոնում, որտեղ կան և՛ ընթերցանողներ, և՛ հարուստ, և՛ ինտելիգենտ հայեր.—բայց մասնաւորապէս երկրպագու, դարի հոգուն ստրկացած օտարամոլ հայեր: Հայի համար գեղարուեստը

ունի շահագործել արդէն մի սկզբած ձեռնարկութիւն, խիչ տեղացիների ձեռքից արդիւնաբերութեան մի ձիւղ, որի վրա իրանք, տեղացիները, արդէն վաղուց ուշադրութիւն են դարձրել, այդ դէպքում նրա մուտքը ֆինանսական է և ցանկալի է: Այլ է նոր բան ստեղծել, այլ է եղածը, ստեղծվածը խիչ ստեղծողների ձեռքից: Նոր, օտարների ձեռքով հիմնած ձեռնարկութիւնները կարող են ոյժ և խրախոյս ներշնչել տեղացի ձեռնարկողներին, ստիպել նրանց կատարելագործվել և սովորել օտարներից այն ամենը, ինչ որ արդիւնագործական ասպարէզում ձեռք է բերվում երկար տարիների տոկուն աշխատութեամբ:

Հատ երևոյթիւն, այդպիսի հայեցակէտ ունի և ուսաց ֆինանսների միջնորդութիւնը, որի Լոնդոնի ներկայացուցիչը վերջերս այդ քաղաքում կայացած մի բանկէտի ժամանակ, իր ճառի մէջ, ի միջի այլոց, ասաց. «Ռուսաստանում միայն նաւթ է, որ ունենք. այդ ահագին կայսրութեան ծոցերում ամեն տեսակ անհամար և անսպասելի հարստութիւններ կան: Օգնեցէք մեզ, անգլիացիները, դուրս հանել և մշակել այդ հարստութիւնները. բերէ՛ք մեր երկիրը դրա համար ոչ միայն ձեր դրամադուրները, այլ և ձեր փորձառութիւնը, ձեր ընդունակութիւնները, ձեր հմտութիւնը, ձեր եռանդը և տոկունութիւնը.— և դուք շուտով կը տեսնէք, որ ձեր ազգային բնաւորութեան այդ էական գծերը Ռուսաստանում կատարելապէս և արժանաւոր փորձառութիւն ու գնահատութիւն կը գտնեն: Աւելի հեռու գնացէ՛ք. ծանօթացէ՛ք տեղի ու տեղը մեր այն արդիւնների հետ, որոնց առանձին կարծողութիւն ունի Անգլիան և բերէ՛ք այդ արդիւնները ձեր երկիրը ձեր անթիւ նաւերով, որոնք ահօսում են ծովերը Անգլիայի փառաւոր դրօշակի հովանաւորութեան ներքոյ: Հաւանական է, որ այդ հայեցակէտի վրա է կանգ առել մեր կառավարութիւնը, և այդ պէտք է համարել՝ արժարժիք հարցի եթէ ոչ վերջնական, զոնէ ժամանակաւոր գործնական լուծումը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ

Ինկաւտները 10-ին
Առհասարակ ներանրի նախնորդ զանազան քաղաքներից և գիւղերից լրագրողները մէջ երևում են թղթակցութիւններ, որոնցից շատերը հայի

տարէնը մի քանի ներկայացումներ են տրվում, աստիճանաբար տարածվում է այդ գործը և գաւառներում պահանջ է դառնում ժողովրդի համար: Հեռու չը գնանք. Գուրթիսի նման փոքր և աղքատ քաղաքը սեփական թատրոն ունի, զերասանական խումբ և մեծ աջողութեամբ է գործը առաջ տանում:

Այս տարի Թիֆլիսը այդ կողմից նմանվում է մի փոքր գաւառի, որտեղ փոքր են լինում ներկայացումները տալու: Մինչև օրս տուել են չորս հայերէն ներկայացում. առաջինը մասին մենք արդէն խօսել ենք «Մշակի» մէջ: Մնացածների մասին այսքանը կասենք. թէ երկրորդը և թէ երրորդը ներկայացումները օրինակական բարձրութիւնից ընկած և Թիֆլիսում անգործ մնացած դերասանների սովորական ներկայացումներն էին իրանց օգտին, սիրողների մասնակցութեամբ. այդ ներկայացումները գաւառական ուղղութեամբ և զանազան աստիճաններով գոհութիւն պատճառեցին ներկայ եղող հասարակութեանը:

Սակայն երրորդ ներկայացումը հետաքրքիր էր նրանով, որ սիրողների մէջ աչքի ընկաւ մեզ անանթթ թատերասէր, օ. ր. Ա. դ. ամբասան, որի համար կարելի է չնորսաւորել անտէր հայկական բեմը և անտարբեր հայ հասարակութիւնը:

Թանգութիւնը համարում են արհեստական, և շատ բնորոշ, դրա հակառակ, պնդում են, թէ հայի թանգութեան պատճառը բերել պակասութիւնն է: Այդ վերջին տեղեկութիւնը կը մոռնանք թէ իշխանութեան և թէ ժողովրդին. ուստի սրբազան պարտականութիւն ենք համարում հրատարակել մեր ձեռքի տակ եղած հաստատ և զբաւոր փաստերը, որ այս տարվայ բերքը Ներանրի նահանգում միջին թուով մէկին կէս աւելի է, քան 1897 թւին, և հայի թանգութիւնը արհեստական է և ոչ թէ բերել պակասութիւնից է առաջ եկել:

Յուլիս ամսից սկսած վախառու հարուստ վաճառականներն ուղարկեցին իրանց գործակալներին Նախիջևանի, Ներանրի, Աղքաւանդաւորի և ժառանգ Սուրմալու գաւառների գիւղերը, փող բաժանեցին. իսկ կաղերն սկսվելուն պէս իրանց գնած հացը հաւաքեցին և մեծ մասամբ բերել տուին քաղաքներում դիւղելու և ըստիցին շատ քիչ քանակութեամբ հայի մի մասը օրէցօր ուղարկել չուկայ ծախելու իրանց հետ պայմանադրված հայթիւններին և այլ անձանց, այնպէս որ ամեն օր հայի պուղը բարձրանում էր 7—10 կոպէկ: Այդ օրինակին հետեցին շատ կալուածատէրեր, այնպէս որ հայի գինը անցեալ նոյեմբերի սկզբներին Նախիջևանի գաւառում բարձրացաւ մինչև 1 ռ. 80 կ. պուղը, իսկ Օրդուաթի մասում 2 ռուբլուց էլ բարձրացաւ: Թանգութեան քիչ չօգնեց այն հանգամանքը, որ մեր դրացի Պարսկաստանի Թաւրիզ քաղաքում էլ թանգութիւն էր, որի պատճառով անկարգութիւններ տեղի ունեցան: Հայի գինը աւելի կը բարձրանար, եթէ նահանգական վարչութիւնը խիստ միջոցներ գործ չը դնէր: Ի նկատի ունենալով այդ խիստ միջոցները, թէ հայ հաւաքող վախառու վաճառականները, և թէ կալուածատէրերը ստիպված էին կամայապահմայ բաց անել շուկաների դռները և հայի գինը կարճ միջոցում Նախիջևանի գաւառում իջաւ մինչև 1 ռ. 40 կոպէկ:

Հարուստ կալուածատէրեր՝ Բահրամ-խաները, Ջաֆար-Վուլի-խաները, Փանահ-խաները, Կասեաղ-աղաները, Տեր-Մկրտչեանները ձեռք չառն, որ 1897 թւին տափարակներում 10 խալվար բահրա տուող գիւղը այս տարի 15—16 խալվար է տուել. իսկ լեռնային մասերում 10 խալվար տուող գիւղը այս տարի տուել է 12—13 խալվար բահրա: Այդպէս կը վկայեն և այն մարդիկ, որոնք նոյն թվականներին հոտարական պայմաններով կալուածատէրերից վերցրել են ժողովրդից հասանելի կալուածական տուրքը: Պէտք է աւելացնել և այն հանգամանքը, որ այս տարի Ներանրի նահանգից հացահատիկ դուրս չեն տարել: Էլ ինչպէս էք պնդում, թէ թանգութիւնը բերել սակաւութիւնից է: Մ.

Նոր ձեւաբաժնի, ուրախալի երեւոյթ էր: Ձեր առաջ կանգնած էր մի ինտելիգենտ օրիորդ՝ դուրախ, փոքրիկ ձայնով և զէմբով. սա բեմի վրա ոչ թէ կարգում էր իր դերը, ինչպէս յաճախ սիրողներն են անում, այլ խաղում էր և խաղում էր մի առանձին սիրով, գիտակցութեամբ, այնպէս որ ակամայ մոռանում էին դերասաններն էլ դա, թէ սիրող: Ներում էր, որ օրիորդի մէջ կայ հակումն զէպի բեմական գեղարուեստը և «աստուածային կայծ»: Շատ ուրախալի կը լինէր, եթէ օրիորդը յաճախ բեմ դուրս գար գոն մի քանի օրիորդի հետ և ունենար իր նման հետեւողներ:

Բայց պարտիկում լաւ ծաղկների հետ յաճախ տեսնում էք և խոշոր պտուղներ, որոնք, սակայն, շատ դժուարաբաժնի են իրանց խալութեամբ և անախորժ իրանց անհամարութեամբ: Եթէ մարդուն վիճակված է աշողութիւն, ամեն կողմից նրա գործը աջող է գտնւում. և հակառակը.—Եթէ ժողովրդը նեղ դրութեան, աղքատութեան մէջ է, հայ կամ ապրուստի միջոց չունի, նրան կարծես ինքը երկինքն էլ չէ խնայում և ուղարկում է մի որ և ինչ աղէտ: Այդ կողմից հայ հասարակութիւնը երբանիկ է, տրամադրաւ տեղի չունի... Օրէցօր աւելանում են ոչ միայն տղէտ տէրտէրները, այլ և փառք Աստուծոյ, տղէտ դերասաններ... Չեմ յիշում

ինչ հետո զիւղերի հետ հաղորդակցութիւնը համարեա թէ կտրուած է:

ԲԱՐԱՎԱՆԱՐԱՍԹԻՅ մեզ գրում են. «Մեր նոր տանուտէրը ստանձնեց իր պաշտօնը. նրա առաջին գործն եղաւ դաւաճապետի պահանջմամբ, զիւղումս կասկածաւոր անձանց համար վճիռներ կազմելն ու հեռացնելը: Այն, ինչ որ մինչև օրս չէինք լսել և տեսել, այժմ տեսանք: Գեղեցիկների 10-ի զիւղերը երկու անգամ անձինք երկու ձի են հանում գոմերից և յանձնում մի երրորդ անձի, որը և տանում է: Գաւառապետը խիստ միջոցների է դիմել: Այս տխուր դէպքերը բաւական ստորացնում են զիւղացիներին, և այս առիթով բանասերները կծու յանդիմանութիւններ են կարգում ժողովրդեան:»

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ ԲՈՂԳԱՐԱՐԱՍԹԻՅ

Բոլորարայի այժմեան կառավարութեան ընդդիմադիր կուսակցութիւնը, որի պետն է դոկտոր Բարոյսյանը, ինչպէս հաղորդեցինք անցեալին, բարձրագոյն կարգի մարմին էր ամբողջ Բոլորարայում ժողովրդական միտինգներ, ղեկեցիկներ 6-ին, կիրակի օրը: Միտինգները տեղի ունեցան Սօֆիայում, Բուչուկում, Վարնայում, Բուրգասում, Տրնովոյում, Նովո-Բաղարում: Սօֆիայում կազմած միտինգը վերջացաւ արհեստագործական այդ միտինգին մասնակցում էին մօտ 6,000 հոգի: Որոշումները բուլղարական լիգայի, ամբողջ կամեցաւ դիմել պալատ և ներկայացնել իշխանին միտինգի որոշումները, բայց ստորագրութիւններ կտրեց նրա առաջը և հրամայեց ցրվել: Երբ ամբողջ չը կատարեց այդ հրամանը, ոստիկանները զէնք գործածեցին: Ամբողջ կատաղեց, սկսեց լարւել, փայտեցով պատասխանել ոստիկանութեան: Երկու կողմից ևս սպանվածներ ու վիրավորվածներ եղան. ամենից շատ վիրավորվեցին ոստիկանները և ժամպրանքները: Կարանաւորվածների թիւը գտնվում են շատ ուսանողներ: Բոլորարայի մասնաւոր ամբողջ պատահականութիւնը ձգում է ոստիկանութեան վրա. ամբողջ կամեցում էր միայն ներկայացնել իշխանին ուղերձ. ոստիկանութիւնը չը պետք է խանգարէր և ընդդիմանար, քանի որ բոլորարական սահմանադրութիւնը թոյլ է տալիս կազմել միտինգներ, հաւաքական աղերսադրեր և ուղերձներ ներկայացնել իշխանին:

ՆԱՄԱԿ ԹԻՌԻՔԻԱՍԹԻՅ

Կ. ՊՈԼԻՍ, ղեկեցիկների 7-ին

Ո՛չ նուազ հետաքրքրական է նաև հետևելը՝ իր կատակերգական կողմերով: Անշուշտ կը յիշէք Վիլհելմի ուղեորութեան ժամանակ Աղեքսանդրի մէջ գտնուած պայթուցիկ բուլեւարտը: Կատարելութեամբ զուր ժամանակի դրած էին: Այն օրէն ի վեր՝ ուր որ գնաց Վիլհելմը, կատակարարական պայտօնները՝ իրենց խելով կորսնցնելու չափ աշխատեցան կայսերական զոյգին կենաց պահպանութիւնը ձեռք բերելու՝ ապագայ պատասխանատուութենէ մը ահաբեկելով, և արդարև մեծ գործունէութիւն ցոյց տուին: Բայց այդ պարագային մէջ ալ Տրեստի դատական նախարարութեան ինչպէս և Աւստրիոյ Աւստրալիական կոնսիստորիային անդամ պ. Պիկօյ Ենթակայ եղաւ հաղածանայ: Ահա-հա՛հա զիւղերը՝ որ դեռ նոր կը յայտնուի «Midnight-Sun» (Միջգիշեր-Արև) անունով շողեցնաւ մը վարձուած էր մասնաւորապէս՝ Պալատին փոխադրելու համար այն երեկի և օտար անձնակազմութիւնները, որ անդամ լինելով նորահանգ եկեղեցւոյ՝ հրաժարուած էին ներկայ գտնուելու Երուսաղէմ, գերման լուսնեական նորահանգ տաճարին օրհնութեան հանդէսին: Երբ «Midnight-Sun» Հայֆայի ծովածոցը կը մտնէ՝ պոլիցիայի պաշտօնեաներն իսկոյն նաւը կը վազեն տեղեւոյն իտալական հիւպատոսարանի թարգմանին հետ, և Պիկօյ անուշով անարխիստ մը կը փնտռեն՝ որուն համար կանխաւ աղաքարուած է եղեր Աղեքսանդրիոյ իտալական հիւպատոսարանին կողմէն: Պ. Պիկօյ իսկոյն կը ձերբակալուի, և, հակառակ իր ըրած բողոքներուն, բանտը կը նետուի՝ սպանելով, որ իրեն համար անօրհնութիւն մը լինի: Բարեբախտաբար զիւղապետ Շոյ՝ Հայֆա կը գտնուի, և ձանձնալով պ. Պիկօյն՝ կազատէ բանտէն՝ հաղար ներողութիւն խնդրելով՝ սն ձեռքարկութեամբ թէ՛ անձերու շփոթութիւն տեղի ունեցեր էր, և այդ՝ մեղք մը չէր անդուշտ:

Խեղճ պ. Պիկօյ՝ Հայֆայէն Նաֆա կուգայ և միևնոյն հանգէսը հին ալ կը կատարուի: Վերջապէս կը ձերբակալուի և իտալական հիւպատոսարանը տարուելով կը հաղարանուի: Պ. Պի-

կօյ սաստիկ կը նեղանայ, Աւստրիոյ հպատակ լինելը կը յայտարարէ, վրայ կը կոչէ իր ձախուժութիւնը, բայց հիւպատոսը հանդարտօրէն կը պատասխանէ, թէ այդ կեղծուածութիւնը առարկու-թիւնները օգուտ մը չունին, թէ իր անուշ-չատունը նշանակուած էր և թէ ինչ պատճառաւ Երուսաղէմ երթալը յայտնուած էր: Գնդապետ Շոյ՝ որ պ. Պիկօյի Նախախնամութիւնն էր, հին ալ վրայ կը հասնի և կազատէ այդ տան-ջանքէն՝ դարձեալ հաղար ներողութիւն հայցե-լով: Անուան ցաւալի նմանութիւն մը պատճառ-եղած էր այս բոլոր չարքներուն:

Արձակեալն պ. Պիկօյ, Նաֆայի կառավարմը մտնելով՝ Երուսաղէմ կուղևորի, բայց կերի թէ՛ ձախուժութեան վերջը չէր հասած... Աղեք-սանդրիոյ իտալական հիւպատոսարանին հետա-գիրը պիտի հաղած է եղեր այդ դժբաղդը դերման եկեղեցւոյ մէջ ալ... Պ. Պիկօյ հին է եղեր՝ հանդէսին նուիրական արարողութեան ժամա-նակ ջերմեռանդութեամբ դգածուած... և անհ, նոյն ժամայն, պ. Պիկօյ կը ձերբակալուի, սա-կայն, այս անգամ, փոխանակ զայրանալու, կը սկսի խնդալ եղած այլադատութեան վրայ՝ «միշտ մի և նոյն կատակերգութեան դերն է՝ որ կը խաղացվի ինձ համար, մի ուրեմն» կընէ խելով՝ շուտ աւարտեցէր գործը, զի գնդապետ պ. Շոյ ըրով տարէր, իմ ու՛ր լինէն նա կարող է յայտնել ձեռք»-Եւ, Շոյ գնդապետն է՝ որ այս անգամ, զայրոյթէն կրակ կտրած՝ կը յանդիմա-նէ պոլիցիայի պաշտօնեաներն ու կընէ.

— Ա՛յ ձերիք է, ձանձրացանք ձեր ըրածը դու-շտութիւններէն:

Միթէ Աղեքսանդրիոյ իտալական հիւպատո-սարանը մեղք չունէր...

Պիկօյ

ՆԱՄԱԿ ԹԻՌԻՔԻԱՍԹԻՅ

Տրապիզոն, ղեկեցիկների 17-ին

Սեպտեմբեր ամսին տեղի յանկարծամէս ե-ղաւ հարուստ հայ մը՝ կիրքեցի Հաճի Մարտի-րոս աղա Արապեան: Գուցէ հարց լինի, թէ ինչ հարկ զբաղեցնել մի ինչ որ հարուստի մասնի-Բայց անշուշտ քիչ մը ներողամիտ աչքով պիտի նայէք մեզ, եթէ դիտեալ, որ Թիւրքիայի մէջ՝ այն ալ դաւաճական զաղաքներու մէջ, սովորա-կան երևոյթ չէ հարուստ Հաճի աղայի մը մեռ-նիլը: Ամբողջ թաղաքը ոտի կիներէ, տէրտէրնե-րը «Մալուու» կը կտրին, առաջնորդը իր հետնորդական հանձարը ցոյց կուտայ՝ հանգու-ցեալին չունեցած բարեմասնութիւնները գովե-լու համար և այլն:

Պիտի ներքէ մեզ ասելու, որ հանդուցեալ Հայի աղան հասարակ վաճառական մը չէր, այլ մեծ յարգանք կը վայելէր, բարեբար մ'էր իր ծննդավայրին, անշահարկիտի ինքնադիր մը Վիւրինի Կրթասիւրաց ընկերութեան, որ թէ և այսօր դադրած, բայց կտակած է Վիւրինի հայոց եկեղեցիին հաստիքաբեր կալուածներ Սամսոնի և Բաթումի մէջ, ինչպէս կաւեռէ մեզ Սամսո-նէն՝ Արեւելքի արժանահաւատ աղայայինը. (թիւ 3837):

Ձարմանալի են մեր բաղբերը, մանաւանդ մեր տաճկահայ ժամուկի բաղբերը, որոնց հիա-նալի պատկերը տուած է Պարոնեան իր «Մե-ծապատիկ Մուրաբիւններ»-ով: Այսքան տարի-ներէ ի վեր դեռ չը տեսանք օրգան մը, որ զերծ մնար տղայական չնորհաւորութիւններէ, սուտ ու սխալ կենսագրութիւններէ և «արժա-նահաւատ աղայային» թղթակիցներ ունենալէ:

Արապեան շատ տարիներէ յետէ այստեղ հաս-տատուած է. Տրապիզոն ընտելող ամեն մէկը շատ լաւ կը ճանչնայ այդ անհամակերպի դէմքը. ա-մեն գործ՝ որ իրեն չա՛հ չէր բերեր, ատելի էր իրեն. ամենուր յայտնի է թէ Սամսոնի ի նը-պատ ճանդանակութեան և այդ կարգի գործե-րու մէջ ինչ զիւրը բունց այդ կիրքեցիան ջոշը: Կոտորածէն վերջը բանտարկուեցաւ. կիտուելու համար: Բանտին մէջ իր անօրինակ թարգմա-նութիւնը բոլորին զարմացուց. մի և նոյն սրահի մէջ թափված էին տասնեակ խելով, անօթի հայ բանտարկեալներ, ոչ ղընի օդնեց, ընդհակառա-կը ամեն օր խորոված և ընտելի կերակուրներ բերել կուտար և կօնեակով ու զինիով կու-կուտար... սովալուկներու կտրին:

Աստիճ դեռ ոչինչ. Մարտիրոս աղա գանձա-պետը եղած է Կրթասիւրաց ընկերութեան մը, որուն պատկանած մէկ կուլուածքը Սամսոնի մէջ և գանձը՝ 2000—2500 սուկի դուսար մը տասնեակ տարիներով իր տրամադրութեան տակ մնացած են, առանց իրենց գոյութիւնը յայտնելու արտաքին աշխարհի: Բոլոր այն հա-մուրդներ ունէին, որ հանդուցեալը իրեն խղճա-միտ աւանդապա՛հ, մտածելով որ սովելոց, հրկիւղեալներու, որբերու, զպրոցներու օգտին

կազմուած յանձնաժողովները—իրեն մեղանշող մահկանացուներու համախմբում—կարող են խո-րել իրենց յանձնված փողերը, որոշած էր իր մօտ գտնված «աւանդը» տանել միասին և յանձ-նել միայն անոր, որը ամեն կասկածէ շատ վեր է: Բայց անհ Արեւելքի աղայայինը կիմա-ցնէ, որ Սամսոնի և Բաթումի կալուածները կտակուած են եղեր Վիւրինի եկեղեցիին. տար-րինակ նորութիւն, որ սակայն ըմբռնող միայն պատճառեց Արապեանը ճանչցողներուն. և այս-պիսի բարոյական հրէշներն են, որ մեր Կ. Պոլ-սի լրագիրները իրեն պարտաճանաչ և բարե-բար մարդիկ կը հռչակեն իրենց թղթակիցնե-րու բերանով՝ առանց տեղ մը տալու գրված հերքութիւններուն:

Ուրիշ աղայային լուր մ'ալ, որ ցոյց կուտայ, որ եթէ վերջին աղէտները մէկ կողմէ առաջ բերին ինքնագիտակցող, կոփուած մատաղ սե-րունը մը, միւս կողմէ խոշոր աստիճաններով շատ վար ինքնուրոյն ամբողջ արդէն ոչ բարձր բարոյականներ:

1894—95 թվի ուժեղ առաջնորդարանը ուղե-լով վերջ մը ալ մուկթարներու սոսկալի զեղ-ծումներուն, տուրքի հաշիւներն ամբողջ կենտրո-նացուց առաջնորդների ձեռքը և խելացի սիս-տեմ մը դնելով տուրքերու գանձման մէջ, ընդ-հանուր մուկթարի պաշտօնը յանձնեց անձի մը, որ շատ բարեխղճօրէն կատարեց իր գործը այն դժուար ժամանակներու մէջ: Այս ամառ հրաժա-րեցաւ՝ հակառակ դանդաղ թախանձանքներու: Առաջնորդարանը հաշիւները ընկեց, վաւերացուց և յանձնեց կառավարութեան. մուկթարը 4 ա-միս ալ մնաց և անկէ վերջը անցաւ Կովկաս՝ իր ընտանիքին այցելելու: Խեղճ մարդը հաշիւ ուղեղ դուրս դրած էր, երբ կարգ մը մարդիկ, որոնք սոված լինելու արդարացումը չունին, մուկ-թարի տուած ընկալագրերը կեղծեցին՝ թաւան-ներու և գուժարներու թիւը փոփոխելով ու ա-հագին աղմուկ հանեցին, թէ մուկթարը հաղա-րներ առեր փախեր է: Արմաշական Առաջնորդա-րանը, որ ամենափոքր քամիէ մը կը տատանի, աղաներու աղմուկին մասնակցելով, վալիի միջո-ցաւ մի քանի անգամ հեռագրեց Բաթումի թիւրք հիւպատոսին, որ այդ չարագործը (?) ձերբակալէ, Տրապիզոն դրկէ. ի հարկէ հիւպատոսը ոչինչ չը կարողացաւ: Ամիսներով թաղբիս օրուայ աղայային հարցը այդ էր: Բայց անհ մուկթար Բաղդա-սար յանդուգ եկաւ: Տրապիզոն: Կատարած էր մարդը. պատուը հատուցում կուղեր. առաջնոր-դարանէն պահանջեց նորէն հաշիւները ընկեց, եկեղեցիի թեմին ծանուցումներ եղան, հաշիւնե-րը վերաքննուեցան, և ինչ—300 դուշ ալ մուկ-թարին առնելով եղաւ: Առաջնորդարանը պար-տաւորեցաւ Պոլսի թիւրքներու մէջ վերականգնել իր պատճառաւ աղաքներու պատուին և այս նեղ վիճակի մէջ 7 ոսկի ալ ճանապարհածախքը վճա-րեց մուկթարին:

Այս երկու դէպքեր առաջ բերի, ցոյց տալու համար թէ մեր բարոյականը ինչպէս մանրացեր է և ինչ գաճաճ բաներ են մեզ զբաղեցնող հարցե-րը: Ատեն մը դպրոցներու, թատրոնի և այլ հա-նարակական օգտաւետ հիմնարկութիւններու շուրջը կը դառնային մեր պաշտօնաբանի մտա-ծումներն ու պայքարները. իսկ իմա՛ ինչ որ մուկթարական հաշիւներ մեզ կուղերին ու խո-րապէս կը յուզեն: Անշուշտ մեր պոլսեցի աղ-բարները չեն նախանձիր, եթէ մենք ալ իրենց հետ գոչենք՝ «աղբերսիս կը յառաջարկմէ կըն»:

Տեղացի

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները մնում են միշտ լարված: Այժմ այն համոզմունքն է տիրում, թէ որքան էլ բարեօրէն յարաբե-րութիւնները, պատերազմի երկիւղն այնու ամե-նային երկար պէտք է տևի: «Matin» լրագրի Լոն-դոնի թղթակիցն ուղղակի գրում է, որ պատե-րազմի վտանգը դեռ չէ անցել, որովհետև այդ վտանգն առաջ է եկել ոչ թէ Ֆաշիզմի հա-րցով, այլ գործերի ընդհանուր դրութեամբ: Անգ-լիան իր զայրույթը միշտ թափում է Ֆրանսիայի վրա ամեն անգամ, երբ որ և է մի անաչդող-թեան է հանդիպում: «Ենչու—աստու» թէ թղթա-կիցը—Անգլիան կուլ էր տալիս բոլոր այն նը-ւաստացումները և վիրաւորանքները, որոնց նա ենթարկվում էր Գերմանիայի և Ռուսաստանի կողմից զանազան ժամանակներում: Այն պատ-ճառով, որ այդ երկու պետութիւնները չունեն այնպիսի դաղթականութիւններ, որոնք կարո-ղանան վարձատրել Անգլիայի պատերազմական ծախսերը: Ֆրանսիական դաղթականութիւննե-րը միշտ գրգռել են անգլիացիների ազատ-թիւնը. արդեն մի քանի տարիներից ի վեր Անգլիան պարտաւորվում է պատերազմի, ամե-նին չը ծածկելով իր դիտաւորութիւնը:

—Լոն XIII պալը նորերս ընդունելով կար-գինաւորներն և եպիսկոպոսներին, յայտնեց նրանց, ինչպէս հաղորդում է «Temps» լրագիրը, որ մը-տաղիր է մի առանձին, ինքնուրոյն կարգինա-լական միաբանութիւն իմնել արեւելեան գործե-րի համար, բոլորովին անկախ պրօպագանդայի միաբանութիւնից:

—Նիւ-Եօրկից հեռագրում են, որ ամբողջ Բո-լիւիան յեղափոխական վիճակի մէջ է գտնվում:

—«Daily Telegraph» լրագիրը հաղորդում է, որ Աֆգանստանում պատրաստվում է, ըստ ե-րևոյթին, մուսուլմանների միահաղին ապստամ-բութիւն: Թէ Հնդկաստանի և թէ ասիական Ռուսաստանի սահմանադրութեան Լրագրի Պետեր-բուրգի թղթակցի ասելով, ուսաց և բրիտանա-կան կառավարութիւնները որոշել են միատեղ գործել, որպէս զի կարողանան խելով այդ ա-պստամբութիւնն իր սաղմի մէջ:

—Կ. Պոլսից հեռագրում են «Temps» լրա-գրին, որ օսմանեան կառավարութիւնը, կամե-նալով խախտել անկարգութիւնները Նմնում, մտադիր է հաստատել այդ նահանգում զինու-թական կայարաններ և ամբողջ բոլոր ուղղա-դիտական կէտերում:

—Կ. Պոլսից գրում են «Le Courrier des Balkans» լրագրին: «Ստացված» լուրերին նայե-լով, Անատոլիայի նահանգների ընդհանուր վե-րաբաշխու է հայկական կոտորածների կազմա-կերպով Եաբրի փաշան նորերս յարձակու-մի ենթարկվել: Նրա վրա ատրճանակ են արձակել, բայց նա միայն վիրաւորվել է: Որդագործու-թեան հեղինակը, որը, ինչպէս ասում են, հայ է, կալանաւորված է. նա յայտնել է, որ եթէ ներ-կայ ողբալի վիճակը չարմաշկով հայկական նա-հանգներում, յայտնի չէ, թէ յուսահատութիւնը ինչու ժողովրդին ինչ կը դրդի գործելու: Սպա-նութեան փորձի լուր մեծ յուզումնք պատճա-ռեց պալատում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եւրօպական լրագիրները հաղորդում են, որ թիւրքաց սուլթանը կանխում է մինիստրական փոփոխութիւն կատարել. այժմեան սարաղաւթը կամ մեծ վեղերը մի գտնաւանալ, կրտսերագէտ փաշայ է, Ալլ-Բիֆատ անուանով: Բայց նշանա-ւոր է մանաւանդ ծովային մինիստր Հասան-փաշան, որ անհաւատալի մեծ հարստութիւն է դրկել: Բարեփոխելով օսմանեան պետութեան նաւերը: Մարդ չը կայ Թիւրքիայում, որ այդ փաշային ատելիս չը լինի: Դեռ մի տարի ա-ռաջ սուլթանը պաշտօնանկ արեց նրան, բայց նա այնքան մեծ ճարպիկութիւն բանեցրեց, որ երկու ժամից յետոյ վերահաստատվեց իր պաշ-տօնում: Սուլթանից սկսած մինչև վերջին պաշ-տօնեան դիտել, թէ ինչ մեծ խաղաղութիւն-ներ, գոյութիւններ է կատարում Հասան-փա-շան, բայց... նա դարձեալ մնում է իր պաշտօ-նում: Անցեալ տարի Փրանսիական մի ընկե-րութիւն ստացաւ Բ. Դոնից կօնցեսիս բարափ կառուցանելու: Ոսկիջրի ամբողջ երկարու-թեամբ: Բըրև ծովային մինիստր, Հասան-փա-շան պայման կապեց այդ ընկերութեան հետ և պայմանագրի մէջ մտցրեց, որ պայմանը կեղ-ծուր պէտք է 2 միլիոն Փրանկ տուգանք վճարի: Պայմանագիրը հաստատվեց սուլթանի կողմից, բայց ընկերութիւնը, մօտիկ ծանօթանալով գոր-ծին, շահաւէտ չը համարեց կօնցեսիսն և որո-շեց յետ կանգնել ու յայտնեց Հասան-փաշային, որ պատրաստ է վճարել տուգանքի կէսը՝ մի մի-լիոն րուբլի: Հասան-փաշան ըմբռնեց, որ կա-րող է մեծ գուժար ձեռք ձգել. նա վաղեց Եւ-րօպ-Բոսիս և համոզեց սուլթանին, որ պետու-թեան համար շատ վնասակար է կօնցեսիսն և պէտք է անպատճառ քանդել պայմանագիրը: Խոտացաւ կէս միլիոն Փրանկով համոզել Փրան-սիական ընկերութեան, որ ձեռք քաշի կօնցե-սիայից: Սուլթանը համաձայնեց. պայմանագի-րը քանդվեց և միայն մի քանի օրից յետոյ ի-մացաւ, որ Հասան-փաշայի զրպանն է մտել մէկ ու կէս միլիոն Փրանկ: Բարկացած, նա իսկոյն հրովարտակ գրեց պաշտօնանկ անելու նրան, բայց Հասան-փաշան կարողացաւ ինչեղեղ խա-լիֆի բարկութիւնը և երկու ժամից յետոյ նա դարձեալ ծովային մինիստր էր:

*

Պրուսիայում հինգ տարին մի անգամ հրատա-րակվում են պաշտօնական տեղեկութիւններ տար-րական ուսման դրութեան մասին երկրի մէջ: Վերջին ինչ տարեկան հաշիւց երևում է, որ Պրուսիայում 1896 թվին կային 36,138 տարրա-կան դպրոցներ 92,000 դասարաններով: Ծաղ-րական ուսման առաջադիմութիւնը երևում է նրանից, որ աւելանում է ոչ միայն դպրոցների թիւը, այլ և ուսուցիչների թիւը: Պրուսիան գիւղերում,—ասում է ուսաց մի լրագիր Բեր-լինի թղթակիցը,—3,468,000 աշակերտներ կան և 49,531 ուսուցիչներ, այնպէս որ միլիոն թիւով մէկ ուսուցիչ դաս է տալիս 70 աշակերտներին: Աշակերտների վրա արած ծախսը ուսմանում է. 1886 թվին իւրաքանչիւր աշակերտ երկրին նստում էր 24 մարկ, իսկ այժմ 35 մարկից ա-ւելի է նստում: Ինչ վերաբերում է տարրական ուսուցչի նիւթական դրութեանը, այժմ նա գանգատվելու առիթ չունի. ընդհակառակը, նը-

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.